


Մեր լեզուի մէջ վերջապէս ուրիշ կոր = curvo արմատ մ'ալ ունինք որ հնդեւր. *kor է : Այս կոր = curvo ըստ Ֆ. Միւլլէր-ի (Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, հատ. 10, էջ 354) եւ ըստ Հայկազեան Բառարանի՝ = յուն. κυρτός, լատ. curvus : Այս համեմատութիւնն ապահով է, ըստ Հիւբշմանի (Armenische grammatik, I.520) . բայց առանց տարակուսի կարելի է, ինչպէս ես ալ Միւլլէր-ի այս կարծիքը սիրով կ'ընդունիմ :

Budapest .

ՂՈՒԿԱՍ ԲԱԴՐՈՒՊԱՆԵԱՆ
ԱՆԵՑԻ



ՔՐԻՍՏԱՓՈՐ ՔՕԼՕՄՊՕՍԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ



Պատմութեան մէջ տարօրինակ էջ մը կը ներկայացնէ Քօլօմպօս-ի Ողիսականը . ոչ ոք այնքան տեղափոխուած, այսինքն յաճախակի թաղուած է : Քրիստափոր Քօլօմպօս-ի փափաքը եղած է թաղուիլ այն աշխարհագրական լայնութեան մէջ, զոր ինք գտած է . իր վերջնական ընտրութիւնը եղած է Սան-Տօմէնիկօ քաղաքին Մայր-եկեղեցին, նոյն անունով կղզիին մէջ, որին ինք Հիսպանիօլա (Hispaniola) անունը տուած էր : Վալլաաօլիտ-ի (Valladolid) մէջ էր որ յոգնութենէ եւ թըշուառութենէ մաշած՝ 1506-ին Համբարձման օրը մեռաւ եւ նոյն քաղաքին Սան-Ֆրանչիսկօ եկեղեցիին մէջ առժամապէս թաղուեցաւ նա : Եօթը տարի յետոյ մարմինը փոխադրուեցաւ Սէվիլ-ի (Seville) մէջ Las Cuevas-ի կարդուսեան (Chartreux) մենաստանը եւ դրուեցաւ Սանթօ-Քրիսթօ-ի մատուռին մէջ, ուր Ֆէրաինանտ թագաւորը անոր վրայ պարզ դամբանադիր մ'արձանագրել տուաւ : Հոն՝ մօտաւ որապէս քառորդ դարի մը չափ կարողացաւ հանգիստ մ'առնել այն մարդը, որին ոսկորները մշտատեւ փոխադրութեան մը սահմանուած էին : Սակայն 1536-ին իր Տիէկօ (Diego) որդիին հետ կրկին փոխադրուեցաւ Հիսպանիօլա կղզին, Սան-Տօմէնիկօ-ի Մայր-եկեղեցիին աւագ խորանին քովի դերեղմանին մէջ : Հոն՝ երկու հարիւր քսան տարիներէ աւելի կը մնայ . բայց երբ 1795-ը վրայ հասնելով Հիսպանիօլա կղզիին արեւելեան մասը Պալ-ի (Bâle) դաշնադրութեան համեմատ Ֆրանսայի պիտի յանձնուէր, պայմաններէն մին այն եղաւ թէ՛ Քրիստափոր Քօլօմպօս-ին ոսկորները Հաւանա պիտի փոխադրուէր եւ հետեւաբար նոյն տարիին դեկտեմբեր 20-ին օրը երրորդ փոխադրութիւնը տեղի ունեցաւ : Հոովմէական եկեղեցիին ամենէն վեհ արարողութիւններով եւ քաղաքական, զինուորական ու կղերական բարձրաստիճան անձնաւորութիւններու ներկայութեամբ

աւագ խորանին քովի գերեզմանը բացուեցաւ : Քօլօմպօսէն մնացած էր միայն քանի մը ոսկորներ , ափ մը մոխիր եւ կապարէ դագաղի մը կըտորուանքները : Այս մնացորդները յարգանքով հաւաքուեցան թանկագին , ոսկեպատ-կապարեայ սնտուկի մը մէջ եւ ամէնը միասին դրուեցան փականքով դոցուած դագաղի մը մէջ : Հոգեհանգիստի պատարագներէ եւ քարոզներէ յետոյ , դագաղը երգեցողութեամբ եւ թնթանօթներու որոտումներու մէջէն շողենաւ տարուեցաւ : Սան-Տօմէնիկօ-է մեկնելու պահին այսպէս փառաւոր եղան յարգանքները , ընծայուած ափ մը մոխիրին այն մարդուն՝ որ իր կենդանութեանը , ամբօխին նախատինքներով շրջապատուած , շղթայներու մէջ ձգեց փառք ու պատիւ , միշտ իր մէջ վառ պահելով յոյս եւ անպարտելի արիութիւն : Երբ Հաւիանա հասաւ , նաւահանգիստի շողենաւները՝ սպանիական սովորութեան համեմատ՝ Մովակալի եւ Ընդհանուր-Հրամանատարի վայել աւանդական պատիւները մատուցին : Քօլօմպօսի աճիւնը շքաւոր հանդէսով փոխադրուեցաւ Մայր-եկեղեցիին դասը , ուր մնաց մինչեւ 1898 դեկտեմբեր ամսի 12ը , երբ Սպանիական Քօնտէ տէ Վէնատիթօ (Conde de Venadito) պատերազմական շողենաւը չորրորդ անգամն ըլլալով կը փոխադրէր Քատիձ (Caditz) :

Այսպէսով առժամապէս կը վերջանայ Քօլօմպօսի աճիւնին փոխադրութիւնը եւ իր հանգստարանը կը գտնէ այն երկրին մէջ , որին համար շատ աշխատեցաւ եւ որին շատ մեծ ծառայութիւններ մատուց : Սակայն՝ մինչեւ ցարդ տարակոյս մը կայ , թէ արդեօք Conde de Venadito-ով փոխադրուած մնացորդները ենթադրուածին չափ յարգանքի արժանի՞ են : — Յիրաւի Դոմինիկեանները կը հաստատեն թէ Քօլօմպօսի ոսկորները տակաւին կը մնան հոն ուր դրուեցան 1536-ին եւ թէ նոյն ատենի դործուած անդգուշութեան հետեւանքով , փոխանակ Քօլօմպօսի՝ անոր որդիին — Տիէկօ-ի — ոսկորները փոխադրուած են Հաւիանա : Ասիկայ նոր ենթանդրութիւն մը եւ կռիւ մը չէ , որովհետեւ 1877-ին կատարուած խուզարկութիւն մը այդպէս ըլլալու կարծիքը կրնայ տալ : Այդ թուականին , այսինքն 1877-ին, Սան-Տօմէնիկօ-ի Մայր-եկեղեցիին դասին մէջ պեղումներ կատարուելով , աշխատաւորները գտան կապարէ սնտուկ մը , մէկ քովը համառօտօրէն դրուած սոյն բանաձեւը . Descubridor de la America . Primer Amirante . Երկու կողերուն վրայ կը նշմարուէր C դիրքը որ Քօլօմպօս անունին առաջին գիրն է , մինչդեռ կափարիչին մէջի կողմը այնքան երկար արձանագրութիւն մը կար որ կը հաստատէր թէ պարունակուած ոսկորները Մեծ-երկրախոյզինն էին : Այս խուզարկութեան եւ դիւտին արդիւնքը եղաւ գրական տաք վիճաբանութիւն մը , որով անկարելի եղաւ համոզել մէկ կողմէն Դոմինիկեան մը միւս կողմէն Քուպացի մը թէ ինք չէր պահապան Քօլօմպօսի իրական մնացորդներուն : Հաւանականօրէն երկու կողմն ալ իրաւունք ունի :

Սան Տօմէնիկօ-ի Մայր-եկեղեցիին սնտուկը շատ պղտիկ է ամբողջ մարմինն մը պարունակելու համար եւ հաւանական է որ տեղական կղերը չուզելով այնքան թանկագին մասունքներէ ամբողջովին բաժնուիլ, տակաւին Հաւանա չղրկուած՝ մաս մը իրեն քով պահած ըլլայ: — Պատմական ճշգրտութիւնը ի նկատի առնելով էր որ թերեւս Հոովմ՝ քսան տարիներու չափ առաջ՝ մերժեց երանելիներու դասը անցունել Քօլօմպօսը, հիմնուելով այն առարկութեան վրայ թէ նա տոգորուած էր նիւթապաշտութեան սկզբունքներով, — թէպէտ այն ատենները ներելի, — բայց ամէն պարագայի մէջ իրական արգելք մ'էր սուրբերու կարգը անցնելու համար:

Առաջին քայլն առնուած էր թէեւ, սակայն անհրաժեշտ է որոշել թէ երանելիներու քով դասուած Քրիստափոր Քօլօմպօսի մասունքները ո՛ւր կը գտնուին, քանի որ պաշտամունքի հարց մը կայ որ անվերջ վիճաբանութեան մը մատնուած ըլլալ կը թուի:

The Times Weekly Edition-էն
Հ. Ա. Ա. ՏԻՆ

ԵՐԿԱԹԷ ՊԵՄԱԿՈՎ ՄԱՐԴԸ

Պօթոնէյլի փողոցին 17 թուակիր տունը, որ Բարիդի ամենէն հին տուններէն մին է, քիչ օրէն պիտի անհետանայ եւ անոր տեղ գործարան մը պիտի կառուցուի:

Հին շէնքին տեղին վրայ նոր մը շինելու համար՝ մէկ կողմէն գետինը պիտի փորուի, միւս կողմէն ալ նոյն գետնին ազատ մնացած մէկ մասին մէջ մասնաւոր պեղումներ պիտի կատարուին, որովհետեւ այնպէս կը յուսացուի որ հոնկից պիտի գտնուի «Նրկաթէ դիմակով մարդ»ուն գերեզմանը:

Պասթիյլի այս առեղծուածային բանտարկեալը, որ Մաղառէնի մահէն քիչ վերջը (1703) մեռած է առանց իր դէմքը մէկու մը ցուցնելու, անոնցմէ է որոնց համար երեւակայութիւնը չարաչար կը յոգնի:

Վօլթէր՝ անոր մասին հետեւեալ տողերը կը գրէ.

«Մաղառէնի մահէն մէկ քանի ամիս վերջը... գաղտագողի Բրօլանսի ծովուն վրայ Սէնթ-Մարկըրիթ կղզին կը ղրկէին անծանօթ, սովորակա-
նէն քիչ մը բարձր հասակով երիտասարդ, գեղեցիկ ու ազնուական գի-
մազծերով բանտարկեալ մը, որ ճամբորդութեան պահուն դիմակ կը կրէր
եւ այդ դիմակն ունէր կղակապ պողպատէ զսպանակներով, որոնց շնոր-
հիւ՝ դիմակը երեսին վրայ՝ կրնար ազատ կերպով ճաշել: Հրաման կար